



Սյունյաց Երկիր

ՈՒՐԲԱԹ, 22 ՄԱՅԻՍԻ 2015Թ.
№ 15 (358)

www.syuniacyerkir.am

**Մի ժողովուրդ - մի
ենթանիջ, ազգերի մեջ
գուցե եւ միայն դու
իրավունք չունես ներխուս
դառակսված լինել:**

ԳԱՐԵԳԻՆ ՆՏՐԵՇ
Cus Utern Խանգաղյանի նույնանուն
վեպի



Ավարտին է մոտենում Կապանի խմելու ջրի ներքին ցանցի հիմնանորոգման հերթական ծրագիրը

Չրամասակարարում

Սյունիքի մարզում արդեն մի քանի տարի է՝ տարբեր ծրագրերով ջրամատակարարման որակի բարելավման ուղղությամբ մի քանի փուլով իրականացվում են մեծածավալ աշխատանքներ, մասնավորապես Համաշխարհային, Ասիական, Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկերի ֆինանսավորմամբ, ինչպես նաեւ «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի եւ համայնքային միջոցների ներդրմամբ: Շինարարական աշխատանքների ընթացքում, բնականաբար, համայնքներում առաջանում են որոշ խոչընդոտներ, որոնք բնակիչների շրջանում դժգոհության տեղիք են տալիս:

«Սյունյաց Երկիր» թերթը բազմիցս անդրադարձել է կատարվող աշխատանքների ընթացքին, այս անգամ հերթական առիթը Կապանի որոշ թաղամասերի ներքին ջրատար ցանցում եւ մաքրման կայանում կատարվող բարելավման աշխատանքներն են: Արդեն մի քանի ամիս է՝ քաղաքում քայլելիս դժվար չէ նկատել լայնորեն ծավալված շինարարական աշխատանքները, որոնց արդյունքում որոշ փողոցներ, մասնավորապես մեքենաների համար, դժվարանցանելի են դարձել:

«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ Հարավային մասնաճյուղի «Կապան» տեղամասի շահագործման եւ աշխատանքների ծառայության պետ Յուրի Գեւորգյան. «Աշխատանքների այս փուլը կավարտենք մայիսի վերջին, իհարկե, նոր ծրագրեր են նախատեսվում իրականացնել, որոնց արդյունքում քաղաքի բոլոր թաղամասերի խմելու ջրի ներքին ցանցը կփոխվի, հիմնովին կբարեկարգվի նաեւ մաքրման կայանը»: Այս փուլում նախատեսվածից մի քիչ ավելի շատ աշխատանք է իրականացվել: Հիմնական շեշտը դրվել է քաղաքի ծայրամասային թաղամասերի, եւ, որ ամենացավոտ խնդիրներից մեկն էր, քաղաքի առանձնատների ներքին ցանցը հիմնովին փոխելու վրա:

Քաղաքում ժամանակ առ ժամանակ ջրամատակարարման ռեժիմի խախտումներ են գրանցվում, որը, ըստ ծառայության պետի, կապված է մաքրման կայանում կատարվող բարեկարգման աշխատանքներից՝ ջրամատակարարման ռեժիմի խախտումը պայմանավորված է նաեւ ձնհալով, որի հետեւանքով մաքրման կայանը չի հասցնում ջուրն ազատել պտորությունից եւ ստիպված դադարեցնում է ջրամատակարարումը: Միշտ չէ, որ կանխատեսելի է անջատումը, եւ բնակիչներին չենք հասցնում իրազեկել: Նշենք, որ ռեժիմի խախտումը պայմանավորվում է նաեւ խողովակների վնասմամբ», - հավելեց նա:

Բնակիչներին տրվող ջուրը գերծ կլինի պտորությունից, կօգտագործվեն նաեւ ստորերկրյա ջրերի պաշարները: Ինչ վերաբերում է ջրի որակի հետ կապված բնակչությանն անհանգստացնող հարցին, ապա, Յուրի Գեւորգյանի հավաստմամբ, Կապանում

Սյունիքը զորակցում է իր մարզպետին եւ ակնկալում հանցագործության մասնակիցների, կազմակերպիչների ու շարժառիթների շուկափուլթ բացահայտում

Մահափորձ

2015թ. մայիսի 20-ի օրվա վերջում տարածվեց Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանի մեքենայի վրա կատարված հարձակման մասին տեղեկությունը:

Պատահարից րոպեներ անց թերթի խմբագրությունում հեռախոսազանգերի տարափ էր: Բազմաթիվ սյունեցիներ՝ Մեղրուց մինչեւ Սիսիան, իրենց զայրույթն էին արտահայտում, դատապարտում տեղի ունեցածը եւ Սուրեն Խաչատրյանին զորակցելու անկեղծ

պատրաստակամություն հայտնում: Ավելի ուշ հրապարակվեց Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի հայտարարությունը: Ահա՝ «Մայիսի 20-ին՝ ժամը

էջ 3

Սյունիքի մարզի ութ գյուղի ընտրողների ճնշող մեծամասնությունը համաձայն է Շինուհայր կենտրոնով Տաթև համայնքի կազմավորմանը

Տեղական հանրավե

Մայիսի 17-ին Գորիսի շրջանի Շինուհայր, Տաթև, Հալիծոր, Հարժիս, Սվարանց, Խոտ, Տանձատափ, Քաշունի գյուղերում անցկացվեց տեղական հանրաքվե:

Հանրաքվեի էր դրված հետևյալ հարցը՝ «Համաձայն եք, որպեսզի Շինուհայր, Տաթև, Հալիծոր, Հարժիս, Սվարանց, Խոտ, Տանձատափ, Քաշունի համայնքները միավորվեն Տաթև համայնք անվամբ, Շինուհայր համայնքային կենտրոնով»:

Ութ գյուղի 4396 ընտրողից, ըստ նախնական տվյալների, հանրաքվեին մասնակցել է 2668 հոգի (60.7 տոկոս), որից 2513 հոգի (94.2 տոկոս) «այո» է պատասխանել հանրաքվեի

դրված հարցին: Շինուհայրում ընտրողների հիմնական ցուցակում ընդգրկված 1766 հոգուց քվեարկությանը մասնակցել է 1098 ընտրող, որից 1079 հոգի «այո» է պատասխանել առաջադրված հարցին, 15 հոգի՝ «ոչ»:

Տաթևում ընտրողների հիմնական ցուցակում ընդգրկված 651 հոգուց քվեարկությանը մասնակցել է 418 ընտրող, որից 389 հոգի «այո» է պատասխանել առաջադրված հարցին, 21 հոգի՝ «ոչ»:

Հալիծորում ընտրողների հիմնական ցուցակում ընդգրկված 443 հոգուց քվեարկությանը մասնակցել է 229 ընտրող, որից 173 հոգի

էջ 5



էջ 3

«Յիշում եմ եւ պահանջում...»



ՂԱԿԻԹ ՉԱՍՊՈՐՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, «Հայոց լեզու եւ գրականություն» գիտամեթոդական հանդեսի գլխավոր խմբագիր

Անդրադարձ

Սերունդների երթը հաջորդում է յուրաքանչյուր գարնան արագությամբ: Ամեն ինչ անցնում ու դառնում է հիշողություն: Ամեն ինչի վրա շերտ-շերտ նստում է ժամանակը, դառնում է տարի, տասնամյակ ու հարյուրամյակ:

Հայացքդ ետ ես թեքում՝ թիկունքդ դատարկ է, ու վեր կային, արդեն չկան, մեկ ուրիշ ժամանակի մեջ են, որ կոչվում է հավիտենություն: Թիկունքում արդեն դու ես, եւ առջեւից գնացողները հիմա արդեն քեզ են նայում: Պատասխանատվությունն անմնացորդ է:

Ամեն ինչ անցնում է, բայց ամեն ինչ չէ, որ մոռացվում է: Հավիտենության մեջ ննջողները կենդանի հիշողություն են, որ քայլում են մեր տեսքով, խոսում են մեր ձայնով:

Ուրիշների արդեն օգտագործած, արդեն խորհրդանշան դարձրած անմոռուկի փոխարեն ինձ հարազատ է հայոց դաշտերում աճող կակաչը՝ բաց կարմիր նուրբ թերթիկներով, մեջք սեւ, ցողունը մազմազ գոտ եւ բացված ալ ծաղիկի կողքին դեռես փակ, մերթեմեք կանաչ կոկոնը: Կակաչի այս տարատեսակը լավան է. շառայլագույն ծաղիկ՝ կյանքի կարմիր արեւը թերթերին, հիշողության սեւ ցավը՝ հոգում:

1915 թվականի ապրիլի 24-ը մեր խոնարհումն օրն է, որ ազգային բարձր արժանապատվությամբ նշվեց 100-րդ տարելիցի այս օրերին:

Այդ օրն առավոտից գամված էի հեռուստացույցին: Լարված ու շարժումներ չէի տեսնում էի պաշտոնական արարողություններին: Եվ հոգեպես թեթևացա, երբ ամեն ինչ անցավ շատ բարձր արժանապատվությամբ: Այդ, ցավը եւս պետք է արժանապատվորեն կրել:

Պաշտոնական արարողության ավարտից հետո այլևս տանը մնալ չէի կարող: Շուրջս կտրվում էր: Բռնեցի իմ անվանակիր թոռան ձեռքը եւ դուրս եկա փողոց, ժողովրդի մեջ՝

այնտեղ, ուր մարդկային երթը դարձել էր ցավի լուռ հորձանք, ծաղիկների շարժվող գետ, համազգային ողբերգության դանդաղ հոսող, բայց կարծես մշտապես նույն դիրքում կանգնած կենդանի հուշարձան:

- Ես քո ցավը տանեմ, հայ ժողովուրդ, ես քո ցավը տանեմ, - ասում են երթի մեջ, ասում են մտքում, եւ աչքերս լցվում են տաք արցունքներով: Ամուր սեղմում են թոռան ձեռքը, վաղվա հայի ձեռքը, ու՛մ ազգային հիշողության հետմեկտեղ ապահով հայրենիք պիտի ժառանգեմ... Պարտավոր եմ: Հակառակ դեպքում հիշողությունը եւ պահանջատիրությունն իզուր են:

Ժողովրդի այս անմոռուց սգո երթն ասես իր խաչը շալակած Քրիստոսի ծանր քայլեր լինի դեպի Գողգոթա, դեպի խաչելություն, ինչին հաջորդեց Հարության առասպելը:

Ստեփան մեջ տեսնում եմ իմ տոհմածառը՝ կացնահարված բնով եւ փրկված կանաչ ճյուղերով: Յիշողությունը նորոգում է ժողովրդի ողբերգական պատմությունը, որ ավելին էր, քան ցեղասպանությունը, որովհետեւ բնաջնջում էր, եւ ականջիս է հասնում այդ ողբերգության մի հառաչը, որ իմ տոհմի ձայնն է: Հետո այդ հառաչին ավելանում է մեկ ուրիշ հառաչ, եւս մեկ ուրիշը, եւ իմ ակնցնեղումն հնչում է հայոց աշխարհի մեծ հառաչանքը՝ «Հանգե՛ք, իմ որբեր...»:

Ավելի ամուր եմ սեղմում իմ անվանակիր թոռան ձեռքը եւ կողքից նայում նրա աչքերին: Իր հարցերի պատասխանը նա արդեն գիտի, իսկ մնացածը կյանքի ու պատմության լուռ դասերն են, որ նա ստանում է շարասյան մեջ՝ ծաղիկը ձեռքին, հայացքն Արարատին:

Այդ մասին այս օրերին ես գրել եմ: Եվ իմ խոսքը՝ «Մեզ միավորում է ցեղասպանության հիշողությունը» վերնագրով, լույս տեսավ «Սյունյաց երկիր» թերթում: Ավելացրած նաեւ «Ցեղասպանության արտացոլումը անգլիագիր հայ գրողների երկերում» հոդվածը:

Ես մշտապես հեռու եմ եղել գերագնահատություններից, բայց «Սյունյաց երկիր» թերթի 80 էջանոց այս բացառիկ համարի համար չեմ կարող իմ բարձր գնահատության խոսքը չասել խմբագրության աշխատակազմին եւ հատկապես խմբագրապետ Սամվել Ալեքսանյանին:

Հանձնիմ մարգպետ Սուրեն Խաչատրյանի եւ «Ձանգեզուրի պղնձա-

մուրհիկների» կոմբինատ» ՓԲԸ-ի այս բացառիկ համարն ունիիր հովանավորները, որոնք ամեն ինչ արել են ըստ պատշաճի թերթըլույս աշխարհ բերելու համար:

Այստեղ նախ Հոռնի սքանչելի պապ Ֆրանցիսկոսն է ու հայոց եկեղեցու երկու աթոռների հայրապետներն են իրենցիտուքով, հայոց ցեղասպանության համաշխարհայնացման իրենց արարողություններով եւ սուրբ Գրիգոր Նարեկացուն Տիեզերական եկեղեցու Վարդապետ հռչակվելու ավետիսով, ինչի համար երախտագիտության ու մեծարման օվսանանքներ պիտի ասենք...

Հայոց ցեղասպանության եւ Գրիգոր Նարեկացու հանդեպ սա բացառիկ վերաբերմունք է քաղաքակիրթ աշխարհի հոգեւոր կենտրոնի կողմից, ինչը վերստին վկայում է քրիստոնեական դավանանքի միասնության ուժը:

Այս վերաբերմունքը մեծ ճանապարհ է բացում թե՛ հայոց ցեղասպանության աշխարհին ճանաչելի դարձնելու եւ թե՛ Նարեկացու շնորհիվ մեր գրական-մշակութային արժեքներն աշխարհին ներկայացնելու համար:

Ինչ վերաբերում է տիեզերախոս ու աստվածաձայն Նարեկացուն, ապա նրա տիրական ազդեցությունն իշխել է հետագա հազարամյակի ամբողջ մտավոր ոլորտում՝ սուրբ Երեսե Շնորհալույց ու միջնադարի մյուս տաղերգուներից մինչեւ Սայաթ-Նովա, մինչեւ Մխիթարյաններ ու Մեծարեմ, մինչեւ նախապես գրողներ՝ Ատոմ Յարճանյան (Սիւնանթո) ու Վարուժան, մինչեւ Թումանյան ու Տերյան, մինչեւ հայոց հանճարի արձանանոց խոստացում եղիչ Չարենց եւ նրա գործը շարունակողները...

«Սյունյաց երկիր» թերթի խմբագրությունը չի դիմել հեշտ միջոցների, որ պարզապես լցնի էջերը: Յուրաքանչյուր էջ ստեղծվել է դժվարություններ հաղթահարելով, որ նշանակում է նախ ունենալ որոշակի գաղափարներ, ստեղծել որոշակի նախագիծ, պատվիրել համապատասխան նյութեր, կազմակերպել հարցազրույցներ եւ ցեղասպանությունը ներկայացնել պատմական փաստերի ժամանակագրությամբ: Սա աշխատանքի օրինակելի ձև է:

Այստեղ եւս պաշտոնական դեմ

Գործարկվեց Կարաճաշրջանային անասնաշուկան

Մայիսի 16-ին Խոտի համայնքի տարածքում (Տաթև տանող մայրուղուն կից) կառուցված անասնաշուկայի բացման արարողությունն էր: Հարյուրավոր մարդիկ էին հավաքվել տոնական այդ միջոցառմանը, քանզի խոսքն անասունների վաճառքին է առնչվում: Իսկ դա այնպիսի խնդիր է, որ շոշափում է գրեթե ամեն մի գյուղաբնակի շահերը:



Տեղեկացնենք, որ «Ռազմավարական զարգացման գործակալություն»-ի կողմից զարգացման եւ համագործակցության գործակալության ֆինանսավորմամբ 2008 թվականից իրականացնում է «Անասնապահության զարգացում Հայաստանի հարավում» ծրագիրը: Դրա նպատակն է նպաստել Սյունիքի եւ Վայոց ձորի մարզերում անասնապահության ոլորտում ներդրված ֆերմերների եկամուտների աճին եւ տնտեսական հնարավորությունների ընդլայնմանը: Ներկայումս ծրագիրը ներառում է մոտ հարյուր գյուղական համայնք՝ 60 հազար բնակչությամբ կամ 14 հազար տնային տնտեսություն (որոնց 75 տոկոսը զբաղված է անասնապահությամբ):

Ծրագրի գործընկերն են ՀՀ տարածքային կառավարման եւ արտակարգ իրավիճակների նախարարությունը, ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը, ՀՀ Սյունիքի եւ Վայոց ձորի մարզպետարանները:

Անասնաշուկայի բացման արարողությանը ելույթ ունեցան ՀՀ տարածքային կառավարման եւ արտակարգ իրավիճակների փոխնախարար Վաչե Տերտերյանը, Հայաստանում Շվեյցարիայի արտակարգ եւ լիազոր դեսպան Լուկաս Գասսերը, Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը:

Այնուհետեւ Սյունիքի անասնաշուկայի բացման պատիվը տրվեց Հայաստանում Շվեյցարիայի արտակարգ եւ լիազոր դեսպան Լուկաս Գասսերին եւ Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանին:

Կարմիր ժապավենը կտրելուց հետո մեղակները շրջեցին անասնաշուկայում: Իսկ այն մի համալիր, որը կտրամադրի կենդանիների առևտրի ծառայություններ՝ կենդանիների բեռնա-

թափում, անասնաբուժական զննում, պահպանում եւ ցուցադրում: Կան նաեւ տարածքներ կերակրման ու կթի համար, բացօթյա եւ փակ անասնազուներ՝ կենդանիների գիշերակացի համար: Անասնաշուկայում կան ցուցասրահներ՝ ագրովաճառակետ, ուր կան գյուղատնտեսական մեքենասարքավորումներ, գյուղգործիքներ, ինչպես եւ հողագործության համար նախատեսված նյութեր՝ սերմեր, պարարտանյութ եւ այլն: Անասնաբուժական դեղանյութերի վաճառակետից էլ կարելի է ձեռք բերել անասնաբուժական դեղանյութեր, գործիքներ, սարքավորումներ: Անասնաշուկան ունի գործարար աջակցության բաժին, որտեղ կկազմակերպվեն դասընթացներ, համաժողովներ, մրցույթներ՝ «Լավագույն ֆերմեր», «Լավագույն կենդանու սեփականատեր» եւ այլ անվանակարգերով:

Սյունիքի աշխատաշուկայի բացումն իր կատարումներով համեմեց Տաթևի վանքի երգչախումբը:

Այնուհետեւ մեղակները վայելեցին սյունեցուն հարիր հյուրավարությունը:

Հայրենիքը սկսվում է յուրաքանչյուր համայնքից: Եթե հարուստ է համայնքը, ապա հարուստ է նաեւ երկիրը: Հարուստ երկիրն արդեն հզորություն է, որի հետ հաշվի են մտնում բոլորը: Այս անասնաշուկան կդառնա հենք՝ համայնքների տնտեսական հզորացման համար: Իսկ եթե ապահով է ապրում համայնքի բնակիչը, ուրեմն ապահով է եւ ամբողջ Հայաստանը:

ԱՎԱՐԴ ՄԵՏՐՈՊՅԱՆ

Հարմարավետ ապրելու հնարավորություն

Վարկեր

Գործիք քաղաքապետարանի ավագանու նիստերի դահլիճում այս անգամ հավաքվել էին նրանք, ովքեր ցանկանում են օգտվել «Ջերմ օջախ» ծրագրից:

Իսկ այս ծրագիրը նրանց հնարավորություն կտա ստանալ ՀՀ դրամով մատչելի վարկեր: Դրանից կարող են օգտվել ցածր եւ միջին եկամուտ ունեցող ընտանիքները: Նրանք կարող են ստանալ միկրովարկեր՝ 500-4000 եվրոյին համարժեք դրամ, որի տոկոսադրույթը կազմում է 13-14 տոկոս: Ժամկետը սահմանված է 5 տարի: Բացի դրանից, վարկառուներն ունեն բռնուս՝ վարկի գումարի 10 տոկոսի չափով: Տրվում է նաեւ էներգաարդյունավետության վարկ՝ 4001-10000 եվրոյին համար-

ժեք դրամ: Տոկոսադրույթը՝ 11 է : Ժամկետը՝ 10 տարի: Բռնուսը կազմում է վարկի 5 տոկոսը: Փաստորեն, նշված վարկատեսակներով կարելի է նորոգել բնակարանները, սկզբնական կոմունալ ծախսերը, ունենալ էներգախնայող բնակարաններ:

«Ջերմ օջախ» ծրագիրը մշակվել է Սոցիալական էներգաարդյունավետ բնակարանային ֆինանսավորման ծրագրի շրջանակում, որն իրականացնում է Ազգային հիպոթեքային ընկերությունը՝ Ֆրանսիայի զարգացման գործակալության ֆինանսավորմամբ: Հարմարավետ ապրելու իսկական հնարավորություն է ընձեռում է «Ջերմ օջախ»-ը: Ահա թե ինչու ծրագիրը ներկայացվելուց հետո բազում հարցեր ուղղվեցին ծրագրի աշխատակազմին: Բոլորը ստացան իրենց հուզող հարցի պատասխանը:

ԱՎԱՐԴ ՄԵՏՐՈՊՅԱՆ

Տարցազրույց

ՀՈՎԻԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ.

«Դպրոցներ կադրավարած մեր այցելություններն ունեցել են միայն ճանաչողական նպատակ»

2014-15 ուստարվա ձեռքբերումների, աշակերտների քննությունների կազմակերպման, ինչպես նաև դպրոցում առկա խնդիրների մասին է զրույցը Այունյացի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Հովիկ Ալեքսանյանի հետ:

– Պարոն Ալեքսանյան, 2014-15 ուստարին, եթե քննաշրջանը հաշվի չառնենք, ավարտվեց: Այս տարի քանի՞ շրջանավարտ կավարտի, և քանի՞ առաջին դասարանցի կհաճախի դպրոց:

– 2014-15 ուստարում Այունյացի մարզում 12-րդ դասարանը կավարտի 1328 աշակերտ՝ նախորդ տարվա 1315-ի փոխարեն, իսկ 9-րդ դասարանը՝ 783 աշակերտ: 2013-14 ուստարում ունեցել ենք 1521, այս ուստարում՝ 1557, 2015-16 ուստարում, նախնական տվյալներով, 1599 առաջին դասարանցի կլինի: Նշենք նաև, որ ոսկե մեդալի 24 թեկնածու ունենք, որից 11-ը՝ Սիսիանի ավագ դպրոցից:

– Ավարտական դասարանների աշակերտներին սպասվում է պատասխանատու քննաշրջան: Ներկայացրեք ավարտական, պետական ավարտական և միասնական քննությունների ժամանակացույցը:

– Քննությունների ընթացակարգով ի պաշտոնե զբաղվում է Գնահատման և թեստավորման կենտրոնը: Քննությունների ժամանակացույցը և ընթացակարգը ԿԳ նախարարությունից արդեն ուղարկել են, ըստ որի՝ 4-րդ դասարանում գիտելիքների ստուգումը կիրականացվի հունիսի 3-ին, մայրենիից, հունիսի 6-ին՝ մաթեմատիկայից, 9-րդ դասարանի ավարտական քննությունները՝ հունիսի 1-ին՝ հայոց լեզու և գրականություն, բնագիտություն՝ հունիսի 4-ին, մաթեմատիկա՝ 10-ին, օտար լեզու՝ 15-ին, հայոց պատմություն՝ 18-ին, ռուսաց լեզու՝ 22-ին: 12-րդ դասարանի պետական ավարտական քննությունները՝ հայոց լեզու և գրականություն՝ հունիսի 3-ին, բնագիտություն՝ 8-ին, մաթեմատիկա՝ 11-ին, օտար լեզու՝ 17-ին, հայոց պատմություն՝ 22-ին:

Միասնական քննություններին այս տարի մարզից հայտագրվել է 681 հոգի, իսկ քննությունները կկայանան հետևյալ ժամանակացույցով՝ կենսաբանություն, աշխարհագրություն, ընդհանուր պատմություն՝ հունիսի 2-ին, հայոց լեզու և գրականություն՝ 5-ին, ֆիզիկա՝ 9-ին, օտար լեզու՝ 12-ին, մաթեմատիկա՝ 16-ին, հայոց պատմություն և քիմիա՝ 19-ին, ռուսաց լեզու՝ 23-ին: Ընդհանուր առմամբ, եթե նախորդ տարիների փորձն էլ հաշվի առնենք, հիմնականում դիմում են մայր բուհ, մանկավարժական (Խ.Աբովյանի անվան, Վ.Բրյուսովի անվան), տնտեսագիտական և ճարտարագիտական համալսարաններ: Բավականին մեծ է դիմորդների հետաքրքրությունը օտար լեզուների հանդեպ:

– Կրթության վարչությունն ի՞նչ դերակատարություն ունի միասնական քննությունների



կազմակերպման գործում:

– Միասնական քննություններն անց է կացնում Գնահատման և թեստավորման կենտրոնը, կրթության վարչությունը հիմնականում կատարում է նախնական հայտերի, մասնակիցների և կազմակերպիչների ցուցակների հավաքում: Այս տարի միասնական քննությունները կանցկացվեն Գորիսի N1 միջնակարգ, որ դեռ ավագ դպրոցի կարգավիճակ չի ստացել, Գորիսի N3 հիմնական և Կապանի N9 ավագ դպրոցներում: Նաև համագործակցում ենք դպրոցներում փորձնական քննություններ անցկացնելու ուղղությամբ՝ մինչ բուն քննություններն աշակերտներին նախապատրաստելու, քննության

նրանք ավելի շատ մտածում են, որ առջևում միասնական քննություններ են, այդ օլիմպիադաներն իրենց գրեթե ոչինչ չեն տալիս: Ես ուզում եմ հորդորել մանկավարժներին, դպրոցի տնօրեններին ապահովել աշակերտների առավելագույն ներգրավվածությունը հանրապետական փուլին, որովհետև նրանք հանրապետությունում մեր մարզն են ներկայացնում: Այդ դաշտը չպիտի լքենք, ինչպես ասում են, սուրբ տեղը երբեք թափուր չի մնում, չպիտի թողնենք, որ այդ տարածքն այլ մարզեր զբաղեցնեն: Մենք ի վիճակի ենք ամենաբարձր տեղը զբաղեցնելու: Մեծ իմաստով աշակերտը միշտ էլ հակված է սովորելու, ուսուցիչը՝ պատրաստ գիտելիք տալու, միայն

|| Մարզում վերանորոգման կարիք ունեցող շատ դպրոցներ կան, բայց այս պահին արդեն հաստատվել է Մեղրու N1 միջնակարգ դպրոցի վերանորոգման, ինչպես նաև Ագարակի միջնակարգ դպրոցի համար նոր մասնաշենք կառուցելու ծրագիրը

կարգին ծանոթացնելու նպատակով: Փորձնական քննությունները գիտելիքի ստուգման նպատակ չունեն, նպատակն ընդամենը թեստերի լրացման կարգին ծանոթացնելն է: Անց ենք կացրել նաև քննության կազմակերպիչների վերապատրաստման դասընթացներ: Ինչ վերաբերում է ավարտական և պետական ավարտական քննությունների անցկացմանը, դրա համար պատասխանատու են ուսումնական հաստատությունները, կրթության բաժինը միայն հետամուտ է օրենքով սահմանված կարգով դրա անցկացմանը: Այս օրերին մենք զբաղված ենք նաև 120-200 և 200 ժամից ավելի բացակայություն ունեցող աշակերտների «ճակատագրով»:

– Ամփոփեք, խնդրենք, այս ուստարվա ձեռքբերումները:

– Առարկայական օլիմպիադաների հանրապետական փուլից ունենք 23 դիպլոմ, 21 գովասանագիր: Ընդհանուր առմամբ գոհ եմ արդյունքներից, պարզապես այստեղ մեկ այլ խնդիր ունենք. 12-րդ դասարանի աշակերտները մարզային փուլին ավելի ակտիվ են մասնակցում, իսկ հանրապետական փուլին երբեմն խուսափում են մասնակցել: Թեպետ սա էլ իր պատճառներն ունի,

– Կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Ալեքսանյանից հետո Դուր պարբերաբար այցելություններ եք կատարում դպրոցներ: Ո՞ր դեպքում կարող է վարչության պետը այցելել դպրոցներ և ինչպիսի՞ ստուգումներ կարող է անցկացնել:

– Մինչ այժմ մարզի 120 դպրոցից այցելել ենք մոտ 80 դպրոց, որոնք միանշանակ ճանաչողական նշանակություն են ունեցել: Այսինքն՝ մենք նպատակ ենք ունեցել տեղում ծանոթանալ դպրոցի հիմնախնդիրներին, ուսուցչական կոլեկտիվին, ներկայացնել մեր դիրքորոշումը հետագա անելիքների վերաբերյալ: Հիմնականում մեր մուտքը խանդավառությամբ են ընդունել, բայց, բնական է, որ դժգոհություններ էլ կլինեն: Հիմա ես հարց տամ. «Ախա՛լ ենք անում, որ ուսուցչից պահանջում ենք նախապես պատրաստված մտնել դասարան» կամ «Ախա՛լ է դպրոցների շրջակայքում պողպատու ծառեր և ծաղիկներ տնկելը»: Գնահատողական այցերի ընթացքում ուսումնասիրել ենք նաև դասալսույցների մատյանները՝ դպրոցում կազմակերպվող դասապրոցներն ընդհանուր պատկերացնելու համար: Ես կարծում եմ, որ այս այցելություններն ավելի են նպաստում դպրոցում աշխատանքների որակը բարձրացնելուն: Այս պահին կարող եմ ասել, որ տիրապետում են մեր դպրոցների հիմնախնդիրներին, որոնց մասին պատշաճորեն տեղեկացրել են մարզպետին, լուծման հնարավոր տարբերակները քննարկվել են: Կրթության վարչությունը բնավ միտում չունի կարգադրական կարգեր հաստատելու:

– Սեյսմիկ անվտանգություն ապահովելու համար ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության որոշմամբ՝ նախատեսվում է նոր շենք կառուցել Կապանի N7 հիմնական դպրոցի համար: Կապանցիներին մտահոգում է այդ դպրոցի աշակերտների ժամանակավոր ուսումնական գործընթացը կազմակերպելու հարցը:

– Ճիշտ է, որոշումը կա արդեն, բայց դեռևս նախագծման հաշվարկային աշխատանքներ չեն կատարվել, իսկ թե ժամանակավոր ուսուցումը որտեղ կկազմակերպվի, կպարզվի ավելի ուշ: Մարզում նմանատիպ դպրոցներ շատ կան, աստիճանաբար այդպիսի դպրոցների հարցը կլուծվի:

– Մեզ մտահոգող հրատապ հարցերից մեկն էլ մեր գյուղերի ամայացումն է, որի հետևանքով փակվում են դպրոցներ: Մարզում կա՞ն անմիջապես փակման վտանգի տակ գտնվող դպրոցներ:

– Այսօր մարզում փակվող դպրոց չունենք, բայց կան դպրոցներ, որտեղ երեք կամ չորս աշակերտ կա: Մյուսինքը ռազմավարական նշանակություն ունեցող մարզ է, և հատկապես սահմանամերձ գյուղերի դպրոցների փակումը վտանգավոր է մեզ համար: Ամենատիպով պատկերը գյուղում վազվզող երեխա չտեսնելն է. եթե դպրոց չկա, ուրեմն կյանքն այնտեղ մարել է:

– Այս տարի նախատեսվո՞ւմ է որևէ դպրոց վերանորոգել:

– Մարզում վերանորոգման կարիք ունեցող շատ դպրոցներ կան, բայց այս պահին արդեն հաստատվել է Մեղրու N1 միջնակարգ դպրոցի վերանորոգման, ինչպես նաև Ագարակի միջնակարգ դպրոցի համար նոր մասնաշենք կառուցելու ծրագիրը: Ինչպես նաև հրատապ լուծում պահանջող հարցերի համար առանձին ֆինանսական միջոցներ են հատկացվելու, թե որոնք կլինեն այդ դպրոցները, դեռևս հաստատված չէ:

– Դպրոցներ կատարած շերտայնություններից ի՞նչ

եզրահանգման եկաք, որո՞նք են մեր ազգային դպրոցի ամենամեծ բացթողումները:

– Շրջապատում ակնհայտ է այն, որ կրթության որակը զգալիորեն անկում է ապրում, բայց դա չի նշանակում, որ մենք շնորհալի աշակերտներ չունենք: Մեր ամենալուրջ խնդիրներից մեկն այն է, որ եւ սովորող աշակերտը, եւ չսովորողը ստանում են ավարտական վկայական և ատեստատ: Պետք է մեխանիզմ մշակել այս հարցի խելացի լուծման համար: Մի՞թե այսօր խնդիր չէ այն, որ ուսուցիչը շատ հաճախ անպատրաստ է մտնում դասարան: Բացի դրանից՝ դպրոցը պիտի ունենա ավանդույթներ:

– Չե՞ք կարծում, որ ուսուցչի գործունեությանը խանգարում են նաև ավելորդ թղթարարությունը, զանազան կազմակերպությունների կողմից անցկացվող միջոցառումները, շարադրությունների մրցույթները և այլն:

– Մենք այս տարի շրջաբերական ենք ուղարկել դպրոցներ՝ համաձայն որի՝ արգելվում է դասապրոցեսի հաշվին միջոցառումների կազմակերպմանը զբաղվել: Ինչպես նաև քննարկել ենք նույն թեմայով տարբեր կազմակերպությունների առաջարկած շարադրությունների մրցույթների դեմն առնելու հարցը: Մեր խնդիրը նախեառաջ պիտի լինի արդյունավետ դասապրոցեսի կազմակերպումը, քիչ, բայց հիմնավոր գիտելիքների մատուցումը: Չեմ ժխտում այն փաստը, որ կազմակերպությունների անցկացրած սեմինարներն ունեն իրենց դրական ազդեցությունը, բայց դրանք դասի հաշվին չպիտի լինեն:

– Մարզի դպրոցներում տարակարգ ունեցող քանի՞ ուսուցիչ ունենք:

– Սա, իհարկե, շարունակական գործընթաց է, բայց այս պահի դրությամբ ունենք 30 տարակարգ ստացած ուսուցիչ: Շարունակվում են ուսուցիչների ատեստավորման գործընթացը, ինչպես նաև վերապատրաստման դասընթացները, որոնք, բնականաբար, միտված են ուսուցիչների մեթոդական գիտելիքների հարստացմանը: Ի վերջո, պիտի հասնենք աշակերտակենտրոն ուսուցմանը:

– Գաղտնիք չէ, որ այսօր շատ երիտասարդ մասնագետներ խուսափում են դպրոցում աշխատելու: Չե՞ր կարծիքով ի՞նչն է պատճառը:

– Երիտասարդ ուսուցիչը թե ինչպես կաշխատի հետագայում, այլ ամենավերջում է եւս տնօրենության, եւ մանկավարժական կոլեկտիվի վերաբերմունքով: Եթե երիտասարդ ուսուցչի կատարած աշխատանքն անընդհատ թերազնահատ ենք, չոգեւորենք, բնական է, որ մա կիկասթափվի և այլ աշխատանք կփնտրի: Ես առաջարկել եմ երիտասարդ ուսուցիչներին դպրոցում ունենալ սեփական անկյուն, զբաղվել դրանց ձեռավորմամբ, իսկ կոլեկտիվին՝ օգտագործել երիտասարդ ուսուցիչների նախաձեռնություններն ու ներուժը:

– Չե՞ր խոսքը՝ շրջանավարտներին:

– Նախեառաջ, լավագույնս նախապատրաստվել պետական ավարտական և միասնական քննություններին: Հաճախում ենք ու զվարճանքներ ժամանակի խնդիր են, իսկ դրանց չափից ավելի՞ն տեղ ու լի վտանգներով: Վերջին դասը պիտի ապագայի հետ կապել, իսկ սրա խորհուրդն այն է, որ յուրաքանչյուր շրջանավարտ այդ պահին գիտակցի իր հետագա անելիքները, իր առաքելությունը հասարակության մեջ: Բոլոր շրջանավարտներին մաղթում են հաջողություններ ու հետաքրքիր ձեռքբերումներ:

«Ճչացող լռությունը»՝ Սյունիքի մարզում

Հայոց ցեղասպանության 100-ամյակի առթիվ ստեղծված քանդակագործ Լիլի Կարապետյանի «Ճչացող լռություն» քանդակների ներկայությունը վայելելու հնարավորություն ունեցան նաև Սյունիքի մարզում: Ապրիլի 19-ին Կապանի քաղաքապետարանի մերձակա զբոսայգում, իսկ նախօրեին՝ Սիսիանում եւ Գորիսում, ցուցադրվեց բրոնզից, փայտից, ավազից եւ այլ նյութերից կազմված վեց քանդակ, որ, ըստ քանդակագործի, արված են այլուրեքալիստական ոճի մեջ եւ արտահայտում են այն հոգեվիճակը, որ բնորոշ է ցեղասպանություն վերապրողին:

«Պատվանդաններն էլ քարից պիտի լինեին, բայց քանի որ սա խորհրդանշում է նաև հայոց մեծ զաղթը, եւ որոշեցի դրանք «գաղթող» դարձնել՝ պատրաստելով ավելի թեթև նյութից՝ Հայկական լեռնաշխարհը բնորոշող ժայռերի տեսքով, որոնցից դուրս են գալիս մարմինները, ֆիզուրները, հային բնորոշող ոգին», - նշեց քանդակագործը:

Հինգ տարի է պահանջվել աշխատանքը կատարելու համար, բացումը կատարվել է էջմիածնում ապրիլի 24-ին: Շրջելով տարբեր քաղաքներում՝ դրանք կներկայացվեն նաև Հայաստանի սահմաններից դուրս: Նախաձեռնության նպատակը, բնականաբար, եւս մեկ անգամ աշխարհի ուշադրությունը ցեղասպանության փաստի վրա սեւեռելն է:

Կապանում հանգրվանելուց հետո «շրջող» քանդակները կներկայացվեն Սեդրիում:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



Սիսիանի քաղաքապետարանի շուրջ մոտ երկու տարի տեւած դատական քննությունն ավարտվեց

Առանց մեկնաբանության

2015թ. ապրիլի 13-ին Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը (նախագահությամբ՝ դատավոր Նապոլեոն Օհանյանի) վերջ դրեց Սիսիանի քաղաքապետարանի շուրջ ստեղծված դատական քաջշուկին՝ սկսված 2013թ. օգոստոսի 28-ին:

Այդ գործի ընթացքին քանիցս անդրադարձել է «Այունյաց երկիրը», ուստի եւ կրկին անդրադառնալու հարկ չկա:

Ներկայացնենք միայն դատարանի վճիռը:

Արմեն Հովակիմյանը («Սիսիանի լրատու» ՍՊԸ տնօրեն) մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 178 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով եւ ՀՀ քրեական օրենսգրքի 325 հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունների կատարման մեջ ու պատժվել 900 հազար դրամ տուգանքով: Կիրառվել է «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ ԱԺ 03.10.2013թ. որոշման 1-ին մասի 2-րդ կետը եւ ազատվել է նշանակված պատիժը կրելուց: Վերաց-

վել է չհեռանալու մասին ստորագրություն խափանման միջոցը:

Հասնիկ Եսայանը («Սիսիանի լրատու» ՍՊԸ հաշվապահ) մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-178 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով եւ ՀՀ քրեական օրենսգրքի 38-325 հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունների կատարման մեջ ու պատժվել 700 հազար դրամ տուգանքով: Կիրառվել է «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ ԱԺ 03.10.2013թ. որոշման 1-ին մասի 2-րդ կետը եւ ազատվել է նշանակված պատիժը կրելուց: Վերացվել է ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը:

Կարեն Դանիելյանը («Գլոբալ կոնտակտ» ՍՊԸ հաշվապահ) մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 308 հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության կատարման մեջ եւ պատժվել 250 հազար դրամ տուգանքով: Կիրառվել է «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ ԱԺ 03.10.2013թ. որոշման 1-ին մասի 2-րդ կետը եւ ազատվել է նշանակված պատիժը կրելուց: Վերացվել է ստորագրություն չհեռա-

նալու մասին խափանման միջոցը:

Աղասի Հակոբջանյանը (Սիսիանի քաղաքապետ) մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 308 հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության կատարման մեջ եւ պատժվել 300 հազար դրամ տուգանքով: Կիրառվել է «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ ԱԺ 03.10.2013թ. որոշման 1-ին մասի 2-րդ կետը եւ ազատվել է նշանակված պատիժը կրելուց: Վերացվել է ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը:

Աշոտ Գրիգորյանը (Սիսիանի քաղաքապետի նախկին տեղակալ) մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 308 հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության կատարման մեջ եւ պատժվել 300 հազար դրամ տուգանքով: Կիրառվել է «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ ԱԺ 26.05.2011թ. որոշման 1-ին մասի 3-րդ կետը եւ ազատվել է նշանակված պատիժը կրելուց: Վերացվել է չհեռանալու մասին ստորագրություն խափանման միջոցը:

ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

«Հիշում եմ եւ պահանջում...»

Եթե եմ, եւ հեղինակություններ, եւ գրողներ, երաժիշտներ ու նկարիչներ:

Հայաստանն ու սփյուռքը միասին են՝ իրենց ավազներով ու կրտսերներով, անցյալի հիշողություններով ու ներկայի ծրագրերով, պատմաբաններով ու գրականագետներով: Սա մեր մտավոր ծաղկեպսակն է՝ դամբարանի անշեջ կրակին խոնարհված:

«Այունյաց երկիր» թերթի սույն բացառիկը յուրովսանն մի հանրագիտարան է. ինձացողներին՝ արտահայտվելու ասպարեզ, չիմացողներին՝ սովորելու հնարավորություն:

Իսկ թուրքիայի նախագահ Էրդողանի խարդավանքները՝ մոյս օրը մեկ այլ տարեկից նշելու չարամտությամբ եւ դրանով եթե ոչ լռեցնելու, ապա խլացնելու հայոց ցավի համաշխարհային հառաչը, ոչ միայն անոթալի է, այլև ծիծաղելի: Այնպես որ՝ Էրդողանից առաջին հերթին թող դողան ինքը, իր վարչապետ Դավութօղլուն եւ շրջապատի մյուս կեղծարարները: Ինչքան պիտի քաղաքականորեն, անագնիվ, բարոյապետ տկար եւ անգամ դիվանագիտորեն սխալ լինի թուրքիայի նախագահը, որ, աֆրիկյան երկրներին՝ «Ցավին անտեղյակ, դավին

անտարբեր» սեւամորթ նախագահներով շրջապատված, իրեն թույլ տա նախատիճակի խոսքեր հնչեցնել Հոռմի պապի եւ Հայաստան ժամանած Ռուսաստանի, Ֆրանսիայի եւ մյուս երկրների նախագահների ու առանձին կազմակերպությունների ղեկավարների հասցեին: Չարենցը ժամանակին լավ է նախշել՝ «Ստամբուլ, միջազգային պոռնիկ...»:

Կարծում եմ, որ սգո հանդիսությանը Երեւանում անպայման պետք է ներկա լինեւր Հունաստանը՝ առաջին դեմքով, իսկ Վրաստանի իշխանություններին անոթանք տալն էլ քիչ է: Ի վերջո, մենք պետք է գործնական հարաբերությունների մեջ ճանաչենք մեր «բարեկամներին», հակառակ դեպքում Հայոսն ու Քարթլոսը կխոռվեն իրարից:

Պատմությունը ոչ միայն կրկնվում է, այլև վերակրկնվում: Եվ մենք պետք է պատրաստ լինենք ամեն մի շրջադարձի:

Այո՛, ամեն ինչ պատմություն է դառնում: Պատմություն է դառնում նաև «Այունյաց երկիր» թերթի այս համարը՝ մամուլի՝ պատմություն, բայց... չի՛ մոռացվում, չի՛ հնանում, ջանքն ապաջան չի անցնում, ինչի վկայություն է իմ այս անդրադարձը...

Սյունիքի մարզի ութ գյուղի ընտրողների ճնշող մեծամասնությունը համաձայն է Շինուհայր կենտրոնով Տաթև համայնքի կազմավորմանը



«այո» է պատասխանել առաջադրված հարցին, 38 հոգի՝ «ոչ»:

Հարժիսում ընտրողների հիմնական ցուցակում ընդգրկված 570 հոգուց քվեարկությանը մասնակցել է 334 ընտրող, որից 304 հոգի «այո» է պատասխանել առաջադրված հարցին, 30 հոգի՝ «ոչ»:

Սվարանցում ընտրողների հիմնական ցուցակում ընդգրկված 224 հոգուց քվեարկությանը մասնակցել է 145 ընտրող, որից 140 հոգի «այո» է պատասխանել առաջադրված հարցին, 2 հոգի՝ «ոչ»:

Խոտուն ընտրողների հիմնական ցուցակում ընդգրկված 660 հոգուց քվեարկությանը մասնակցել է 380

ընտրող, որից 365 հոգի «այո» է պատասխանել առաջադրված հարցին, 12 հոգի՝ «ոչ»:

Տանձատափում ընտրողների հիմնական ցուցակում ընդգրկված 64 հոգուց քվեարկությանը մասնակցել է 48 ընտրող, որից 47 հոգի «այո» է պատասխանել առաջադրված հարցին, անհամաձայնություն չի հայտնել ոչ ոք:

Քաշունիում ընտրողների հիմնական ցուցակում ընդգրկված 18 հոգուց քվեարկությանը մասնակցել է 16 ընտրող, որից 16 հոգի «այո» է պատասխանել առաջադրված հարցին, անհամաձայնություն չի հայտնել ոչ ոք:

«Այունյաց երկիր»

